

## ՄԱՐԳԱՐԻՏԱ ՎԱՐԳԱՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման  
ակադեմիայի իրավագիտության ամբիոնի հայցորդ

### ԱՆՁԻ ԱՐԺԱՆԱԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ

Սույն հոդվածում բացահայտված է «անձի արժանապատվություն» հասկացության ընկալման և մեկնաբանման, դրա վերաբերյալ տարբեր հայացքների ու մոտեցումների պատմաիրավական վերլուծությունը:

Մարդու արժանապատվությունը բազմակողմ հասկացություն է, որի բովանդակությունը և կառուցվածքը հնարավոր է բացահայտել և ներկայացնել նաև հասկացության տարբեր կողմերի ուսումնասիրության միջոցով, որոնցից առաջնահերթ են՝ ընդհանուր և մասնավոր կենսաբանական, անհատական - անձնական (անձի արժանապատվություն), սոցիալական, գենդերային (կնոջ արժանապատվություն, տղամարդու արժանապատվություն), մասնագիտական (մասնագիտական արժանապատվություն), կրթամշակութային, ազգային, կրոնական, ռասայական (անձի արժանապատվություն՝ ըստ ազգային, կրոնական և կամ ռասայական պատկանելության):

*Հիմնարար բառեր- անձի արժանապատվություն, մարդու արժանապատվություն, մարդկային հասկանիչ, բնածին, անբախտելի, անօտարելի, երաշխիք, ինքնագիտակցում, արժեքային հիմք, համընդհանուր բնույթ:*

«Անձի արժանապատվություն» հասկացության ընկալման և մեկնաբանման, դրա վերաբերյալ տարբեր հայացքների ու մոտեցումների համեմատական և պատմաիրավական վերլուծությունը վկայում է, որ այդ հասկացության իրավական մեկնաբանությունը տարբերությամբ է ընկալվել՝ պայմանավորված պատմական տարբեր ժամանակաշրջաններում հասարակության զարգացման այս կամ այն մակարդակով:

Այսպես օրինակ, պրոֆեսոր Մ.Ա. Պալքեր պատվի և արժանապատվության իրավունքը դիտարկում է որպես մարդու և քաղաքացու առանձնահատուկ սուբյեկտիվ իրավունք՝ նրա կառուցվածքում ներառելով պատվի և հավասար արժանապատվության կանխավարկածը, պատիվ և արժանապատվություն ունենալը, պատիվը տնօրինելը, պատվի և արժանապատվության պաշտպանությունը<sup>1</sup>:

Ճիշտ հակառակն է պնդում Ա.Ֆ. Սուրժիկը, որի կարծիքով պատիվն ու արժանապատվությունն ունեն անփոփոխ ծավալ իրենց գոյության ողջ ժամանակահատվածում, և այդ ծավալը ընդհանուր է բոլոր անձանց համար, իսկ տարբեր անձանց վերաբերմունքն իրենց պատիվն ու արժանապատվությունը ոտնահարող նույնանման գործողությունների վերաբերյալ որոշվում է ոչ թե այդ հասկացությունների ծավալով, այլ համապատասխանաբար ոչ նյութական իրավունքի խախտման ընկալման անհատական սահմանների ձևավորմամբ, ինչպես նաև խախտված ոչ նյութական իրավունքը պաշտպանելու անհատական պատրաստակամությամբ, որը անհատական իրավագի-

տակցության մակարդակի հետ ուղիղ կապի մեջ է<sup>2</sup>:

«Անձի արժանապատվություն» հասկացության իրավական բովանդակության և կառուցվածքի վերլուծությունը բացահայտում է երկու էական տարրերի առկայություն. դրանք են անփոխարինելին կամ հաստատունը և փոխարինելին կամ փոփոխվողը:

Ընդ որում, անփոխարինելի կամ հաստատուն է, օրինակ, անձի արժանապատվությունը՝ որպես մարդու (անձի և կենսաբանական տեսակի ներկայացուցչի, մարդկային քաղաքակրթության հիմքի) կամ կոնկրետ անձի արժանապատվությունն այն հատվածում, որը պայմանավորված է անձի ինքնաընկալման առանձնահատկություններով և հասարակությունում հաստատված արժեհամակարգով ու յուրաքանչյուր կոնկրետ անձի բացարձակ արժեքի վերաբերյալ պատկերացումներով:

Իսկ փոխարինելի տարրերի դեպքում այն փոփոխվում է՝ ելնելով կոնկրետ մարդու գենդերային (սեռային), մասնագիտական, կրթական, մշակութային, ազգային-կրոնական, ռասային և այլ հատկանիշներից, ինչպես նաև հասարակության զարգացման և քաղաքակրթության մակարդակից, քաղաքական համակարգից և այլ հանգամանքներից:

Անհրաժեշտ է նկատել, որ փոփոխելի կամ փոխարինելի տարրերը նաև բնորոշվում են մարդու կյանքի սոցիալական համատեքստում, դրա հանդեպ իր շրջապատի և այլ մարդկանց վերաբերմունքով, այդ թվում՝ իր իսկ գործողություններից բխող:

Քանի որ հասարակության վերաբերմունքը

կոնկրետ անձի նկատմամբ կարող է ժամանակի ընթացքում փոփոխվել (ինչպես դրական, այնպես էլ բացասական առումով), և այդ վերաբերմունքի վրա ազդում են երրորդ անձանց սուբյեկտիվ գնահատականները, ուստի անձի արժանապատվության կառուցվածքի այդ մասը ևս մշտական կամ անփոփոխ չէ և կախված է կոնկրետ անհատի վարքագծից, շրջապատի հանդեպ նրա վերաբերմունքից (և նրա հանդեպ շրջապատի վերաբերմունքից), որոշակի հատկանիշների, բարոյական բաղադրիչների առկայությունից:

Բացի այդ, մարդու արժանապատվության կառուցվածքում կարևոր նշանակություն ունեցող տարրերից կարելի է առանձնացնել այդ հասկացության դրսևորման օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմեր: Այսպես, եթե անձի արժանապատվության օբյեկտիվ կողմն արտացոլում է անձի հատկանիշների ամբողջությունը, որով պայմանավորված է նրա հեղինակությունը հասարակությունում և այլ անձանց վերաբերմունքը նրա հանդեպ (սոցիալապես ընդունվող և ակնկալվող բարոյական և այլ հատկանիշներ, գիտելիքների մակարդակ, սոցիալապես օգտակար հմտություններ, արժանավայել կենսակերպ և այլն), ապա անձի արժանապատվության սուբյեկտիվ կողմն արտացոլում է անձի ինքնընկալումը, ինքնագիտակցությունը և ինքնագնահատականը, որոնք արտահայտվում են «սեփական անձի արժանապատվություն» հասկացության մեջ:

Նշված երկու կողմերն էլ միատարր չեն և իրենց հերթին ներառում են տարբեր բաղադրիչներ: Այսպես օրինակ, մարդու արժանապատվության օբյեկտիվ կողմը բովանդակում է ի ծնե մարդուն բնորոշ, համեմատաբար կայուն (անփոխարինելի) հատվածը, ինչը ժամանակակից ժողովրդավարական հասարակությունն ու իրավական ժողովրդավարական պետությունն անհրաժեշտ են համարում մարդկային անձի արժևորման համար: Այն արտահայտվում է նրանում, որ անձի արժանապատվության հիմնական տարրը վերաբերում է յուրաքանչյուր մարդու, անկախ այլ անձանց կողմից նրա հանդեպ ունեցած վերաբերմունքից: Եվ այդ մասը կամ հատվածը կարող է փոփոխվել՝ կախված պետության և նրա մարմինների կողմից իրավունքի գերակայության սկզբունքի իրացման որակից:

Ինչ վերաբերում է անձի արժանապատվության սուբյեկտիվ կողմի տարրերին, ապա անհրաժեշտ է նկատի ունենալ այդ հասկացության հետևյալ մի շարք ասպեկտները.

1) համեմատաբար կայուն (անփոփոխելի) տարր. կապված է որպես մարդկային անձ ինքնագիտակցման և ինքնաընկալման հետ, ինչպես նաև մարդու ազգային-մշակութային, կրոնական, ռա-

սայական, սեռային նույնականացման հետ, և, իհարկե, նման ինքնագիտակցության և իրավաբնական առանձին տարրեր փոփոխվում են մարդու տարիքի և զարգացման մակարդակի հետ զուգընթաց,

2) փոփոխելի տարր. կապված է մարդու կողմից սեփական հատկությունների և բնութագրերի ընկալման հետ, որոնց նա տիրապետում է կյանքի ընթացքում՝ կրթական և մշակութային մակարդակի բարձրացման, գիտելիքի և փորձի ավելացման, սոցիալական դիրքի բարձրացման, սեփական ծրագրերի և կյանքի նպատակների ինքնուրույն ձևակերպման հետ:

Այսպիսով, անձի արժանապատվության սուբյեկտիվ և օբյեկտիվ կողմերն ունեն տարբերություններ, և դրանցից յուրաքանչյուրն իր կառուցվածքով համապատասխանում է անձի արժանապատվության իրավական բովանդակության վերոնշյալ անփոփոխելի և փոփոխելի տարրերի համակցությանը:

Այսպիսով, անձի արժանապատվությունը բարդ և միաժամանակ բազմակողմ հասկացություն է, որի բովանդակությունը և կառուցվածքը հնարավոր է բացահայտել և ներկայացնել նաև նրա տարբեր կողմերի ուսումնասիրության միջոցով:

Դրանցից առաջնահերթներն են. ա) ընդհանուր և մասնավոր կենսաբանականը, բ) անհատական-անձնականը (անձի արժանապատվություն), գ) սոցիալականը (որոշակի սոցիալական խմբին կամ ժամանակավոր (իրավիճակային) սոցիումին պատկանելը), դ) գենդերայինը (սեռային՝ կնոջ արժանապատվություն, տղամարդու արժանապատվություն), ե) մասնագիտականը (մասնագիտական արժանապատվություն), զ) կրթամշակութայինը, է) ազգայինը, ը) կրոնականը, թ) ռասայականը (անձի արժանապատվություն՝ ըստ ազգի, կրոնի և ռասայական պատկանելության) և ժ) տարիքայինը:

Անձի արժանապատվության կենսաբանական ասպեկտը կայանում է նրանում, որ յուրաքանչյուր մարդ՝ որպես կենդանի էակ, ի ծնե ունի որոշակի արժեք (որը ժողովրդավարական հասարակությունում բացարձակ է) և որպես արժեք ունեցող՝ ընկալվում է ոչ միայն շրջապատի, այլև հենց իր կողմից (եյնելով հենց միայն այն հանգամանքից, որ նա մարդ է): Նման բարձրագույն արժեք ունի յուրաքանչյուր մարդ: Այն արտահայտվում է մարդկային հասարակությունում հաստատված վարքագծի նորմերում, որոնցից են մարդուն կյանքից զրկելու անթույլատրելիությունը, ուրիշի մահը հարգելը, անգամ թշնամու զինվորի գերեզմանը պղծելու անթույլատրելիությունը և այլն<sup>3</sup>:

Մարդու արժանապատվության անհատական - անձնական կողմն արտահայտվում է այդ

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

արժանապատվության ամբողջական ինքնընկալման, ինքնագիտակցման և ինքնագնահատման մեջ: Դրանք իրենցից ներկայացնում են կոնկրետ անձի «ես»-ի ինքնաճանաչումը, որը բնորոշվում է ինչպես օբյեկտիվ բնական և սոցիալական կառուցվածքներից ու անհատական առանձնահատկություններից, գիտակցված և ենթագիտակցական շեշտադրումներից ու դրույթներից բխող, այնպես էլ նույն անձի կողմից ինքնուրույն կառուցվող և սեփական անձնային կերպարներով պայմանավորված: Ընդ որում, յուրաքանչյուր մարդ կարող է ունենալ բազմաթիվ նման կերպարներ և դրույթներ, նպատակներ, որոնք ձևավորում են կայուն համակարգ, որը մտնում է սեփական «ես»-ի և շրջապատող աշխարհի սուբյեկտիվ կերպարի մեջ:

Նշված մոտեցումը, ի տարբերություն մյուս կողմերի, առավել կապված է կոնկրետ անձի հետ, արտահայտում է նրա անհատականությունը և եզակիությունը և առավել քիչ է կապված հասարակության մեջ այդ անձի դիրքի հետ: Այստեղ մարդը դիտարկվում է որպես շրջապատող աշխարհից առանձին կոնկրետ անհատականություն՝ սեփական ներաշխարհով: Ի տարբերություն մարդուն սոցիալական պլանում (որպես հասարակական էակ) դիտարկող դիրքորոշման՝ անձնային մակարդակում մարդու արժանապատվությունը դիտարկվում է՝ վերացարկվելով հասարակության և այլ մարդկանց ազդեցությունից: Մարդը դիտարկվում է հասարակության հետ կապերից դուրս որպես անհատական, անկախ էակ:

Անձի արժանապատվության անհատական անձնային կողմը բարդ համակարգ է: Ունենալով սեփական խառնվածք, կամք, ցանկություններ ու մտադրություններ, զգացմունքներ ու միտք, սովորություններ և այլ հատկանիշներ՝ մարդը իրեն շրջապատող իրադարձությունները, հարաբերությունները և շրջապատող աշխարհից մնացած ամեն ինչ ընկալում է իր մոտ ձևավորված բարոյական և աշխարհայացքային չափանիշների, ինչպես նաև սեփական համոզմունքների լույսի ներքո:

Ելնելով վերոնշյալ հոգևոր և բարոյական զարգացման առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր անհատ տարբեր կերպ է ընկալում իր կյանքի հանգամանքները: Այն, ինչ ընկալում է անձը, հետագայում դառնում է նրա անբակտելի մասնիկը, դառնում է անհատական-անձնական (արժեքներ, փորձ, գիտելիք, ասպրումներ և այլն): Այն, ինչ ժամանակի ընթացքում մերժվում է մարդու կողմից, դուրս է մղվում անձի արժանապատվության բովանդակության շրջանակից: Հենց դրանում է արտահայտվում մարդու արժանապատվության անհատական-անձնական կողմի համեմատաբար փոփոխելի մասը:

Մարդու արժանապատվության սոցիալական կողմը արտահայտվում է նրանում, որ անձի արժանապատվությունը զգալի չափով պայմանավորված է հասարակության մեջ նրա դիրքով և ընկալումով, հասարակության հետ նրա հարաբերություններով ու սոցիալական դերով: Մարդու արժանապատվության այդ կողմը մատնանշում է նրա (այդ կողմի) պատմամշակութային և սոցիալական պայմանավորվածությունը և հարաբերական կախվածությունը:

Հարկ է նշել, որ մարդու արժանապատվության սոցիալական կողմը ընդհանուր աղերսներ ունի անհատական-անձնականի, ազգայինի և այլ կողմերի հետ: Ինչպես արդարացիորեն ասել է գրող Ֆ. Իսրանդերը «Մարդու կանգառ» աշխատության մեջ, «երբ հասարակությունը խլում է մարդու սոցիալական արժանապատվությունը, ազգային արժանապատվությունը սկսում է անսպասելիորեն ուռչել, ինչպես քաղցկեղը»:

Միաժամանակ, անձի արժանապատվության սոցիալական կողմը կարելի է դիտարկել նաև լայն իմաստով, որպես մարդու արժանապատվության բոլոր մյուս կողմերն ընդգրկող երևույթ, բացի անհատական-անձնականից և մասամբ զենդերայինից: Այդ տարրն արտահայտվում է նաև մեկ ընտանիքի անդամների արժանապատվության փոխկապակցվածության մեջ՝ վերածվելով մեկ միասնության, որը կարելի է սահմանել որպես ընտանիքի արժանապատվություն:

Ուշադրության է արժանի մարդու արժանապատվության սոցիալական կողմի փոխկապակցվածությունը անհատական-անձնական կողմի հետ: Այսպես, մարդու անձնական կյանքը, որը անձի գոյության անհրաժեշտ բաղադրիչն է, ենթադրում է անձնականի, անհատականի և հասարակականի միջև հստակ սահմանի առկայություն: Յուրաքանչյուր անձ ունի «սեփական տարածություն» ունենալու իրավունքը, որտեղ բացի նրանից մուտք չունի ոչ ոք, եթե տվյալ անձն ինքը թույլ չի տվել դա որևէ մեկին: Որոշ հեղինակներ այդ կողմն անվանում են «անձնական ինքնիշխանություն»<sup>4</sup>, որն արտահայտում է անձի՝ անկախություն ընտրելու իրավունքը:

Որոշակի դեպքերում «անձի արժանապատվություն» հասկացության բովանդակության այն տարրերը, որոնք կապված են մարդու անձնական կյանքի հետ, անմիջական կապի մեջ են գտնվում այն տարրերի հետ, որոնք առնչվում են հասարակական հարաբերությունների հետ<sup>5</sup>:

Այդ տեսանկյունից անհրաժեշտ է նկատել, որ մի կողմից մարդու արժանապատվությունը կապված է այնպիսի հասկացությունների հետ, ինչպիսիք են «պատիվը», «հեղինակությունը», «բարի համբավը», «վստահելի մարդը», «արժանա-

www.journal.lawinsstitute.am

պատիվ կյանքը», «կյանքի որակը» և այլն, իսկ մյուս կողմից «անձի արժանապատվություն», «մարդու արժանապատվություն» հասկացությունը իր սոցիալական կողմով սերտորեն կապված է տարբեր չափանիշներով այնպիսի հակասական և հակադիր նշանակության հասկացությունների հետ, ինչպիսիք են «անպատվությունը», «վարկաբեկումը», «խայտառակումը», «նսեմացումը», «անարգանքը» և այլն:

Ինչ վերաբերում է մարդու արժանապատվության գենդերային կողմին, ապա հարկ է նշել, որ այն արտահայտում է անձի սեռը և պայմանավորված է տղամարդու ու կնոջ հոգեբանական առանձնահատկություններով, նրանց մտածելակերպով, շրջապատող աշխարհի ու հասարակական հարաբերությունների ընկալումով և նույնականացումով, ինչպես նաև տղամարդու և կնոջ վրա արտաքին աշխարհի ազդեցության ընկալումով ու ըմբռնումով:

Այսպես, նույն գործողությունը, որը կապված է ֆիզիկական շփման հետ, տղամարդու կողմից կարող է ընկալվել որպես ուշադրության ոչ արժանի, դատարկ բան, սակայն կնոջ պարագայում այդ գործողությունը վերջինիս կողմից կընկալվի որպես լուրջ վիրավորանք:

Անձի արժանապատվության գենդերային կողմը կարող է արտահայտվել «փնտիմ զգացողություն», «ամոթխածություն», «կանացի արժանապատվություն» և այլ հասկացություններում:

Անձի արժանապատվության հաջորդ կարևոր տարրերից է տարիքային կողմը, որը որոշվում է մարդու տարիքային առանձնահատկությամբ: Այն, ինչը մանկահասակին ներվում է (չնայած սոցիալապես չի խրախուսվում, ինչպես օրինակ, կռիվը) կամ անտեսվում է (վիրավորական խոսքերը), չափահաս տարիքում կարող է քրեական գործի հարուցման պատճառ դառնալ:

Աձի արժանապատվության ազգային, կրոնական կամ ռասայական կողմերը (անձի արժանապատվությունը՝ կախված ազգային, կրոնական կամ ռասայական պատկանելությունից) կապված են մարդու ինքնաընկալման և ընկալման հետ՝ ըստ նշված հատկանիշների, և արտահայտվում են ազգի (էթնիկ խմբի, ժողովրդի) համար համակեցության կանոններով (հպարտություն, ցավ, վիրավորանք ապօրինի ոտնձգությունների դեպքում):

Մասնավորապես, մարդու արժանապատվության ազգային կողմը ևս որոշ կերպ կարող է արտահայտվել «ազգային հպարտություն», «ազգային միասնություն» հասկացություններում:

«Մարդու արժանապատվություն» և «անձի արժանապատվություն» հասկացությունների առկա բնորոշումների կառուցվածքային, համակարգա-

յին, տրամաբանական և իրավա-լեզվաբանական վերլուծությունը, ինչպես նաև «անձի արժանապատվություն» հասկացության ընկալման և մեկնաբանման խնդրի տարբեր կողմերը, «մարդու արժանապատվության» պաշտպանության, այդ թվում՝ պատվի և արժանապատվության վերաբերյալ գիտական հետազոտությունների վերլուծությունը հնարավորություն են տալիս բացահայտել վերոհիշյալ հասկացության էական հատկանիշների համակարգը:

Այսպիսով, անձի արժանապատվությունը կարելի է բնորոշել որպես մարդկային հատկանիշ, իրավագիտակցության և մարդկային մշակույթի բնականոն և սոցիալապես պայմանավորված արժեքային համակարգ և, միաժամանակ, մարդու իրավունքների և ազատությունների հենք, որն արտահայտվում է արժեքային-աշխարհայացքային գնահատականներով, հոգեբանական զգացումներով, և պայմանավորված են անձի ինքնընկալումով, ինքնարտահայտմամբ ու սեփական անձի հանդեպ այլ անձանց վերաբերմունքի բարոյահոգեբանական ընկալմամբ:

Նշված հասկացության բովանդակության առավել հստակ բացահայտման համար նպատակահարմար ենք համարում ուշադրություն հատկացնել նաև «մարդու արժանապատվության կիրարկում» հասկացությանը<sup>6</sup>:

Այդ առումով անհրաժեշտ է մեջբերել պրոֆեսոր Օ. Պիրցակի այն խոսքը, ըստ որի՝ մարդու արժանապատվության հաստատումն ու պահպանումը ենթադրում են էթիկական, բարոյական, իրավական և սոցիալական այլ նորմերի ու համապատասխան բարոյական ու իրավական հարաբերությունների ամբողջության ստեղծում, որտեղ կարտահայտվի անձի հանդեպ որոշակի հարգանք: Անձի արժանապատվության երաշխիքների իրագործումը օրենսդրության տարբեր ոլորտների իրավական նորմերում, դատական և պետական այլ որոշումներում պայմանավորված է անձի բարոյաիրավական արժեքով և հասարակական նշանակությամբ<sup>7</sup>:

Մարդու արժանապատվությունը վերացական չէ. այն պոտենցիալ կայուն իրավունք չէ, այլ, ինչպես արդեն ներկայացվել է, բարդ դինամիկ համակարգ է՝ կայուն և փոփոխական տարրերով: Մարդու արժանապատվությունը՝ իր մի շարք բաղադրիչներով, մշտապես գործում և մշտապես իրացվում է. այն հանդես է գալիս որպես անձի գոյության և զարգացման անբաժանելի մաս և կրում է դինամիկ բնույթ:

Պետության և հասարակության խնդիրն է ապահովել այդ իրավունքի իրականացման երաշխիքները: Անձի արժանապատվության իրավունքի իրացման ապահովումն ու պաշտպանությունը պե-

տական և տեղական ինքնակառավարման՝ հատուկ լիազորություններով օժտված մարմինների պարտականությունն է:

Իրավունքի տեսության համաձայն՝ ինչպես իրավունքի իրականացումը, այնպես էլ մարդու արժանապատվությունն ունի իր իրականացման ձևերն ու մեթոդները:

Մարդու արժանապատվության իրավունքի իրականացման հիմնական երաշխիքն է այդ իրավունքի ապահովումը, պահպանությունն ու պաշտպանությունն ապահովող համապատասխան իրավական նորմերով ամրագրումն է: Ընդ որում, այդ իրավունքը միայն օրենքով ամրագրելը բավարար չէ այն լիարժեք իրականացնելու համար. անհրաժեշտ են համապատասխան պայմանների նախանշում, այդ թվում՝ պետական համապատասխան ապարատի միջոցով դրանց պաշտպանության իրականացում, հասարակության մեջ իրավագիտակցության ձևավորման ապահովում և այլն:

Անձի արժանապատվության իրավունքի իրականացման երկրորդ ձևը պետության կողմից այդ իրավունքի իրացման ապահովումն է: Այդ գործընթացը դինամիկ և կայուն տարրերի այն համակարգն է, որտեղ պետք է երաշխավորվի մարդու արժանապատվության իրավունքի պահպանումը, իրականացումը, կիրառումը և կիրարկումը:

Մարդու արժանապատվության արտահայտման, դրսևորման և պաշտպանության տարբեր ասպեկտների, ինչպես նաև մարդու արժանապատվության իրավունքի իրականացման ընկալման և մեկնաբանման խնդրի, այդ իրավունքի պաշտպանության, այդ թվում՝ պատվի և արժանապատվության գործերի վերաբերյալ գիտական հետազո-

տությունների արդյունքների կառուցվածքային-համակարգային, տրամաբանական և իրավաբանական վերլուծությունը հնարավորություն է տալիս անձի արժանապատվության (մարդու արժանապատվության) պահպանումը, իրականացումը, կիրառումը և կիրարկումը բնորոշել որպես կոնկրետ անձի (կրողի և դրսևորողի) սեփական արժանապատվության պաշտպանության (պետության և հասարակության կողմից որպես սոցիալական նշանակություն ունեցող, պահպանվող և պաշտպանվող արժեք) և դրսևորման, արտահայտման, պաշտպանության և կյանքի կոչելու այլ մեխանիզմի իրական հնարավորությունների տիրապետում, այդ թվում՝ նաև այլ անձանց հետ հարաբերություններում, դրա հետ կապված իրավունքների ամբողջություն, ինչպես նաև առօրյա ընթացիկ անմիջական և իրավիճակային մարմնավորում:

<sup>1</sup> Տե՛ս Паладьев М.А. Конституционное право человека на честь и достоинство (основания, содержание, защита): Автореф. дис. ... канд. юрид. наук / МГЮА. М., 2006.

<sup>2</sup> Տե՛ս Суржик А.Ф. Честь, достоинство и деловая репутация в гражданском праве Российской Федерации: Дис. ... канд. юрид. наук / Академия народного хозяйства при Правительстве Российской Федерации. М., 2007.

<sup>3</sup> При этом можно выделить частно-биологический и общебиологический аспект. Частно-биологический рассмотрен здесь, а общебиологический проявляется в некоторых определенным образом схожих чертах самовосприятия и самозащиты, вообще свойственных высшим млекопитающим. Но этот аспект, здесь лишь упомянутый, мы оставляем за рамками нашего исследования.

<sup>4</sup> Տե՛ս Бляхман Б.Я. Понятие суверенитета личности // Актуальные проблемы юридической науки и правоприменительной практики. Сборник научных трудов (по материалам 4 международной научно-практической конференции, состоявшейся 15 октября 2005 г.). М., 2005. Ч. 1. С. 38-49.

<sup>5</sup> Տե՛ս Օրինակ, անձնական կամ ընտանեկան գաղտնիքի գաղտնագերծումը:

<sup>6</sup> Տե՛ս Սովորաբար «կիրարկում» հասկացությունը օգտագործվում է իրականացնել, կյանքի կոչել իմաստով:

<sup>7</sup> Տե՛ս Пырцак О. Защита чести и достоинства в Республике Молдова: действующие регламентации и перспективы // Законодательство и практика масс-медиа (Молдавия). 2002. N3.

**Մարգարիտա Վարդանյան**

Аспирант кафедры юриспруденции Академии  
государственного управления Республики Армения

#### РЕЗЮМЕ

##### *Достоинство как основа прав человека и качество личности*

В данной статье выявлено достоинство личности как неотъемлемая часть человеческого фактора в общественной жизни, социально-правовой характеристики человека, важное составляющее его субъективных (личных) прав, обязательств, свобод, инструмент, регулирующий отношение человека и общества, человека и государства, различные межличностные человеческие отношения, необходимый феномен правосознания и права, система социальных связей, система человеческих взаимоотношений, которая является предметом влияния сложного и разностороннего юридического инструмента, отражение осознания социальной ценности каждого человека как фундаментальная закономерность современного общества, целостность социально-нравственных качеств.

*Ключевые слова:* достоинство личности, достоинство человека, качество человека, врожденные, неразрывные, неотчуждаемые гарантии, самосознание, ценностные основы, всеобщий характер, необходимый феномен правосознания и права.

**Margarita Vardanyan**

Graduate student of chair of Jurisprudence of the  
Public Administration Academy of RA

#### SUMMARY

##### *The dignity as the basis of the Human Rights and as a Human Characteristic*

This article reveals the dignity as an inseparable part of human factor in the social life, as an important component of the social-juridical characteristic of a person, his/ her subjective rights, responsibilities and freedom, as a tool for regulating the relationship between the individual and the society, between the individual and the state as well as interpersonal relationships, as necessary phenomenon of the legal awareness and the law, as a system of social networking and personal interrelationships, which is an object of influences of complex and multi-faced juridical instruments, it reflects the recognition of each person's social value as the basic standard of the modern society, as the integrity of social-ethical characteristics.

*Keywords:* the person's dignity, human dignity, human characteristic, innate, indissoluble, inalienable, guarantees, self-consciousness, basis of values, universal nature, a necessary phenomenon of legal-awareness and law.